

Ապրանքի գրանցման ուղեցույց

Ապրանքների դրոշմավորման «Ի-Մարկ» համակարգում ապրանք գրանցելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ չափանիշները.

1 «Ապրանքի նույնականացում» բաժնում

- «Ապրանքի անվանումը» դաշտը պետք է սկսել լրացնել **մեծատառով՝** նշելով ապրանքի **տեսակը, բրենդը, անվանումը, ծավալը** (եթե առկա է սպիրտի ծավալ կամ ճարպի տոկոս, ապա պետք է նշել նաև այդ տվյալները):

Օրինակ՝

Ընպելի յոգուրտ, դասական, 2.5%, 200 մլ, E-mark

- Տեղեկատվությունն անհրաժեշտ է գրել առանց հապավումների՝ **բացառությամբ չափման միավորների:**
- Կարևոր է հիշել, որ ապրանքի տեսակը և բնութագիրը (օրինակ՝ համը, ծավալը և այլն) պարտադիր է լրացնել **հայերեն լեզվով:** Իսկ «Ապրանքային նշանի անվանումը» պետք է գրել կամ այն լեզվով, որը նշված է պիտակի վրա, կամ առանց թարգմանության՝ **հայերեն տառերով:**

«**Ծագման երկիր**» դաշտը լրացնելիս պետք է նշել այն երկիրը, **որտեղ արտադրվել է գրանցվող ապրանքը:** Շատ անգամ ապրանքի բրենդի երկիրը (ըստ GS1 ընկերության տվյալների) ու արտադրման երկիրը տարբերվում են միմյանցից: **Օրինակ՝** ապրանքի բրենդի ծագման երկիրը GS1 ընկերության պաշտոնական կայքում գրանցված է Գերմանիա, սակայն ապրանքի պիտակի վրա փաստացի նշված է Չինաստան: Այս դեպքում ծագման երկիրը նշվում է Չինաստանը:






2

Ապրանքի նկարը կցելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ չափանիշները.

- նկարը և դրա վրա առկա տեղեկատվությունը պետք է լինեն **պարզ, ընթեռնելի և առանց փայլի:**
- նկարի ֆոնը պետք է լինի **բացառապես սպիտակ՝** առանց որևէ այլ երանգի կամ առարկաների
- նկարի ծավալը չպետք է գերազանցի **10 MB:**
- Ապրանքը պետք է լինի **նկարի կենտրոնում, մեծ պլանով, պարզ տեսանելի:**
- Պարտադիր է կցել առնվազն ապրանքի **դիմային** կողմի լուսանկարը:
- Ապրանքի հիմնական՝ դիմային լուսանկարը, պետք է լիովին համապատասխանի ապրանքի **վերջնական շուկայական տեսքին:**

Օրինակ՝

Այսպես օրինակ, եթե կցվում է ապրանքի ոչ **վերջնական փաթեթավորմամբ լուսանկար,** այլ դրա պարունակությունն առանձին կամ տարայում լցված է ներկայացվում, ապա այդ ապրանքը **չի հաստատվի մոդերատորների կողմից:**



3

«Սպառողական բնութագրեր» բաժնում

«Արտադրանքի բաղադրությունը՝ դրա բաղադրիչների նշումով (որակական)» դաշտն անհրաժեշտ է լրացնել **հայերեն**: Եթե բաղադրությունը ամբողջությամբ առկա չէ, ապա առնվազն **հիմնական բաղադրիչները** պարտադիր պետք է նշել, այն էլ **հայերեն լեզվով**: